ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի նպատակն է ապահովել որակյալ կրթական միջավայր, որտեղ ուսանողը կարողանա բացահայտել իր կրթական կարիքները, ստանա մասնագիտական գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ:

Համալսարանում ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը ուղղված է ուսանողների գիտակրթական կարիքների ուսումնասիրմանը, բացահայտմանը և ըստ կայացրած որոշումների կրթական գործունեության իրականացմանը: Համալսարանի նպատակն է՝

- ցուցաբերել լրացուցիչ աջակցություն ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում,
- աջակցել ուսանողներին ուսումնագիտական գործընթացներում,
- ուսումնասիրել և վերլուծել ուսանողների վերհանած կարիքները՝ կրթական գործունեության բարելավման և կրթական համակարգի զարգացման համար, սպառողի կարիքներին և պահանջներին համապատասխան,
- ուսանողների կողմից վերհանած կարիքին տալ համապատասխան լուծում: Համալսարանի ուսանողները իրավունք ունեն արտահայտել իրենց կարիքները համալսարանի միջավայրի և գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ՝
- Ուսումնական գործընթաց (դասավանդման որակ, ուսումնառության միջավայր և միջոցների ապահովվածություն, լրացուցիչ խորհրդատվություն, մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն):
- Գիտահետազոտական գործընթաց (գիտական լաբորատորիաների առկայություն և հագեցվածություն, գիտական աշխատանքների համար խորհրդատվություններ, գիտական ուղղվածության ընտրություն):
- Այլ ծառայություններ և գործընթացներ (կարիերայի զարգացում, սոցիալական աջակցություն, ուսման շարունակություն և այլն):

Համալսարանում ուսանողների աջակցության ուղղություններն են՝

- մասնագիտական աջակցություն,
- աջակցություն ուսումնառության ընթացքում,
- սոցիալական աջակցություն,
- աջակցություն վարչական անձնակազմի կողմից,
- ուսումնառության ռեսուրսների ապահովում,

- կարիերայի զարգացմանը ուղղված աջակցություն:

Ակադեմիական և լրացուցիչ աջակցություն

Համալսարանում ուսանողների կարիքների բացահայտման օղակ են հանդիսանում մասնագիտությունների համակարգողները, դեկանատները, ղեկավար անձնակազմը և ուսանողական խորհուրդը:

Ուսումնական գործընթացի հետ կապված կարիքները ուսանողը կարող է վերհանել մասնագիտության համակարգողի և դեկանատի միջոցով:

Մասնագիտության համակարգողի խնդիրն է աջակցել ուսանողին ուսումնառության ամբողջ ընթացքում, տանել մասնագիտության հետ կապված ուղղիչ աշխատանքներ, ուսումնական տարում առաջացած հարցերի պարզաբանում և լուծումների որոնում: Դեկանի խնդիրն է ուսանողին աջակցել ուսումնառության ռեսուրսների ձեռք բերման, սոցիալական և այլ հարցերում:

Ուսումնական և գիտական գործընթացների հետ կապված ավելի ընդհանրական կարիքները ուսանողները կարող են վերհանել ուսումնական և գիտական գծով պրոռեկտորների կամ համալսարանի ռեկտորի առջև:

Ընդհանուր իրավունքների հետ կապված կարիքները ուսանողը կարող է վերհանել ուսանողական խորհրդի միջոցով:

Կարիերայի զարգացման և ուսման շարունակման հետ կապված կարիքները ուսանողները կարող են վերհանել դեկանատներում, մասնագիտացնող ամբիոններում, կարիերայի գարգացման և խորհրդակցության կենտրոնում և Արտաքին կապերի ու միջազգայնացման դեպարտամենտում: